

**Տարբն Սիմոնյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ
ԱՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍՏԱԼԻՐՈՒԹՅՈՒՆԸ.
ՄԻՆԵՐԳԵՏԻԿ ՍՈՏԵՑՈՒՄ**

Երևոյթների ուսումնասիրման սիներգետիկ մոտեցումը ժամանակակից գիտության անրաժանիք մասն է, որը ուրույն կամուրջ կամ մերոդարձանական տեղեկատվության փոխանակման հնարավորություն է ստեղծում բնական և հասարակական գիտությունների միջև։ Այն կարելի է դիտարկել որպես արդիական և ամենից խոստումնալից հետազոտական ծրագրերից մեկը, որն ուղղված է ցանկացած տիպի համալիր համակարգերի էվոլուցիայի և ինքնակազմակերպման ընդհանուր ուղղությունների փնտրմանը՝ անկախ դրանց առանձին տարրերի և ենթահամակարգերի։ Սիներգետիկան իր բնույթով միջառարկայական և բազմառկայական տեսություն է։ Դրանում զարգացած ոչ գծային էվոլուցիոն մոդելները կարող են կիրառվել «մարդկային կոգնիտիվ և մշակութային ակտիվությունը հասկանալու, ինչպես նաև համալիր հասարակական համակարգերը կառավարելու համար»։¹ Այդ տեսությունը կարող է օգտագործվել որպես մերոդարձանական գործիք նաև պետականագիտությունում և իրավագիտությունում։

Ժամանակակից իրավաբանների շրջանում իրավագիտության տեսամերոդարձանական խնդիրների լուծման ժամանակ սիներգետիկ հետազոտությունների օգտագործման նպատակահարմարության հետ կապված գերիշխում է մերժողական վերաբերմունք։ Սակայն պեսը է փաստել, որ արդյի պետականագիտական և իրավագիտական շատ խնդիրներ դեռևս չեն ստանում գիտականության հիմնավորված լուծումներ։ Դրա պատճառներից մեկը, կարծում ենք, դրանց հետազոտումն է դասական մերոդարով, որոնք, իհարկե, անհրաժեշտ են, սակայն ոչ բավարար համակարգային էություն ունեցող երևոյթները օրյեկտիվ հետազոտելու համար։ Անհրաժեշտ է դրանք դիտարկել հետդասական (այսինքն՝ ոչ դասական և հետ-ոչդասական) գիտական մերոդարով, որոնք,

¹ H. Haken and H. Knyazeva, H. Haken and H. Knyazeva, Arbitrariness in Nature: Synergetics and Evolutionary Laws of Prohibition, Journal for General Philosophy of Science 31, Netherlands, Kluwer Academic Publishers, 2000, էջ 57-73:

հարստացված լինելով ոչ միայն հումանիտար, այլև բնական գիտությունների զարգացման արդյունքներով, հնարավորություն են տալիս պետականության երևոյթների զարգացման դիտարկումը կազմակերպելու առավել օբյեկտիվ և բազմակողմանի հիմքերի վրա՝ հարաբերական տարածաժամանակի, ինչպես նաև ներհամակարգային առանձնահատկությունները հաշվի առնելով, որոնց մեջ էական դեր է կատարում հենց այդ նույն համակարգին առնչվող համակարգային սկզբնական հիշողությունը:

Միներգետիկայի ճամաչողական մոտեցումների կիրառման նշանակությունն իրավաբանական գիտությունում ընդգծվում է իրավական ճանաչողության ճգնաժամի մերողաբանական լուծմամբ՝ հիմք ընդունելով մի քանի մոտեցումների սինթեզը: Եվ, միգույք, այն, ինչ պետք է իրավագիտությանը, իրավունքի դինամիկայի տեսությունն է: Իսկ սիներգետիկան, որ ամերիկան դրկտրինում ավելի շատ հայտնի է համալիրության տեսություն անվանմամբ, «սահմանում է իրավական տեսության այդ նոր հարացույցի (պարադիգմայի) համար անալոգիական հիմք»:¹

Ծշմարիտ է, որ «իրավական օբյեկտներն այսուհետ չեն կարող ուսումնասիրվել՝ այլ գիտություններից, հասարակական զարգացումից մեկուսացված վիճակում»:² Եվ ինչպես իրավացիորեն նշում է Վենգերովը. «պետության և իրավունքի տեսությունը աստիճանաբար ներքաշել է նաև ինքնակամ, ինքնակազմակերպվող և պատահական գործընթացների վերաբերյալ ձևավորող նոր գիտությունից՝ սիներգետիկայից եկող մեթոդաբանությունը: Այս մերողաբանական գաղափարները թույլ են են տալիս ավելի լավ հասկանալու պետականական ոլորտում, հատկապես՝ տեղական ինքնակառավարման մեջ դեմոկրատական սկզբունքների զարգացման մեջ և գործադիր իշխանության կառուցվածքում ինքնակառավարման և կառավարման գործընթացները: Հասարակական զարգացման մեջ պատահականության կառուցվածքական դերի նոր տվյալները առավել խորն են բացատրում հասարակության պետականական կյանքում սուբյեկտիվ գործոնը, թույլ են տալիս պատճառահետևանքային կապերի

¹ Ruhl. J. B., Complexity theory as a paradigm for the dynamical law-and-society system: A wake-up call for legal reductionism and the modern administrative state, Duke Law Journal, volume 45, 1996a, 849-928, էջ 906:

² Դ. Ա. Կերիմով, Մетодология права, Предмет, Функции, Проблемы, Философия Права, Москва 2008, էջ 244:

հետ մեկտեղ հաշվի առնել նաև պատահական և հնարավոր կապերը»:¹ Եվ, մեր կարծիքով, մեթոդաբանական բազմակարծության պայմաններում սիներգետիկայի հենց մեթոդաբանական մշակումները կարող են դիտարկվել որպես հիմնական, անկյունային ուղենիշներ միջառարկայական երկխոսության համար:

Սյուս կողմից սիներգետիկան բացահայտում և ընդգծում է ինքնակազմակերպվող հասարակական համակարգում մարդու դերը, ով, լինելով համալիր համակարգի բաղկացուցիչ մասը և հնարավորություն ունենալով էմպիրիկ փորձը համատեղել տեսական վերլուծության արդյունքների հետ, կարող է անմիջականորեն ազդել այդ համակարգի, ինչպես նաև այդ համակարգից սննօցվող այլ համակարգերի գարգացումների և հնարավոր ճյուղավորումների (բիֆորկացիաների) ընտրության վրա, քանի որ «սուբյեկտը ինքնակազմակերպվող իրականության որակապես որոշակիացված միջոցն է»:²

Այստեղ հետաքրքրական է Ա.Բ. Վենգերովի ներկայացրած հարացուցային փոփոխությունների պարզ մեկնաբանությունը. «Ամեն ինչ սկսվում է բարդ և խճճված սոցիալական երևոյթների վերլուծության և բացատրության համար նոր հասկացությունների անմեղ օգտագործումից, իսկ հետո հանկարծ հայտնաբերվում է, որ այդ սոցիալական երևոյթները և շատ բնագիտական ֆենոմեններ ունեն միևնույն բնույթը, ենթարկվում են միևնույն հիմնանարար սկզբունքներին: Մարդկային միտքը բարձրանում է ծանաշողության նոր մակարդակի և զարմանքի և անհանգստության հետ խառնված հոլյուվ բացահայտում և դիտարկում է բացված նոր խորքերը և հետավորությունները»:³

«Եթր մենք խսում են իրավունքի տեսությունը համալիր հարմարվողական համակարգերի տեսությամբ [սիներգետիկական տեսությամբ] լրացնելու մասին, մենք կարող ենք մտածել այն բովանդակային խորության մեկ կամ մի քանի մակարդակներում կիրառելու մասին»⁴: Առավել

¹ Теория государства и права. Ч. 1. Теория государства/ Под ред. А. Б. Венгерова, Москва, 1996, т. 18:

² Аршинов В. И., Синергетика времени // Синергетика времени.— М.: Репроникс, 2007, т. 16:

³ Венгеров А.Б., Синергетика и политика: Общественные науки и современность. 1993. № 4. т. 55-69, т. 55:

⁴ Ruhl J. B., Law's Complexity, Georgia State University Law Review Symposium Issue, Forthcoming, FSU College of Law, Public Law Research paper No. 313, 885-911 т. 2, 887 т. 2:

խորը նակարդակում կարելի է հարցնել, թե արդյո՞ք իրավունքն ինքնին համալիր հարմարվողական համակարգ: Եթե տնտեսությունը և իրավական համակարգը՝ երկուսն էլ համալիր հարմարվողական համակարգեր են, ապա ակնկալվում է, որ այդ երկու համակարգերը համալիր կերպով են փոխհարաբերվում միմյանց հետ, ինչպես նաև մյուս բոլոր համալիր սոցիալական և ֆիզիկական համակարգերի հետ, որոնց հետ նրանք փոխկապակցված են: Եվ եթե իրավունքը համալիր կերպով ազդում է տնտեսությանը և այլ համակարգերին, իսկ տնտեսությունը և այլ սոցիալական համակարգերը ազդում են իրավունքին, տարբերակվող հավանականություն է, որ իրավունքը ինքն իրեն ազդում է համալիր կերպով:¹

Այս ամենը վերլուծելիս ակնհայտ է դառնում, որ հասարակական գիտություններում, այդ բվում՝ պետականագիտությունում և իրավագիտությունում, հարացուցային փոփոխության անհրաժեշտություն կա: Այդ փոփոխությունը արտահայտվում է դիմանմիկայի և զարգացման նախսկին դետերմինիստական, դիալեկտիկական աշխարհընկալումից նոր, ավելի լայնի՝ սիմերգետիկականի անցումում, իսկ դրանց տարբերությունները արտահայտվում են գործընթացների՝ պատճառում, ձևում, հատկությունում, գործոններում, արդյունքում և ճանաչողության ու արդյունքի ստուգման միջոցներում:²

| Գործընքաց | Նախսկին՝ դասական և ոչ դասական հարացույց (դիմանմիկա) | Նոր՝ հետ-ոչ-դասական հարացույց (սիմերգետիկա) |
|-----------|---|---|
| Պատճառ | Հակասությունների պայքար և միասնություն, հակասականությունների միասնություն, բացասան բացասում, բանակականից որպակականի անցում: | Անհավասարակշռություն, անկայունություն, ճգնաժամեր, էվոլուցիա և համակվլուցիա: |

¹ Մանրամասն տե՛ս Ruhl J. B., Law's Complexity, Georgia State University Law Review Symposium Issue, Forthcoming, FSU College of Law, Public Law Research paper No. 313, 885-911 էջ, 887 էջ:

² Венгеров А.Б., Синергетика и политика: Общественные науки и современность. 1993. № 4. էջ 55-69, էջ 57:

| | | |
|--|--|---|
| Ձև | Աստիճանականության ընդհատում, «քոիչքներ», «պարուրածներ», ցածրից բարձրին: | Ֆլուկտուացիաների (շեղումների, տատանումների) կուտակում, բիֆուրկացիա, ֆազային անցումներ, ինքնակամ անցումներ, նոր իրավիճակում գտնվող համակարգեր, ոչ գծայնություն, ինքնակազմակերպում: |
| Հատկություն | Դետերմինացվածություն, պատահականությունը՝ որպես անհրաժեշտության դրսևորման ձև: | Դետերմինացվածություն՝ պատահույթների առանձին ոլորտ, հավանական պատահականություն, կռահողական պատահար: |
| Գործոն | Օբյեկտիվ, սուբյեկտիվ, օրինաչափություն, միտում: | Պատահարի փոքր ազդեցություններ, կարգի պարամետրերի ատտրակտոր, մեզոմակարդակի միջոցով միկրոմակարդակի գործընթացների ազդեցությունը մակրոմակարդակի վրա: |
| Արդյունք | Ի վերջո՝ անհրաժեշտություն, հետընթաց շարժում, փոփոխություններ (այդ թվում՝ դինամիկ գործընթացի սուբյեկտի վրա փոփոխված միջավայրի ազդեցությունը): | Մասերի գումարին անհավասար բազմամակարդակ ամրողի ձևավորում, նոր անկայունություն, անդանալիություն, մտադրվածության անհամապատասխանություն, բարդացում, համալիրացում: |
| Ծանաչողության և արդյունքի ստուգման միջոց | Վերացականից կոնկրետ և հակառակը, պրակտիկան՝ որպես ճշնարտության չափանիշ: | Ուզիրություն, ռելիէբիլիտացիա, անկանխատեսելիություն: |

Սրա վրա հիմնվելով՝ անհրաժեշտ է արդի թիֆուրկացիոն (ճյուղավորման) ժամանակաշրջանում երևոյթները դիտարկել նոր հայացքով, ինչը հնարավորություն կտա նկատելու այն նրբությունները, որոնք «քիթեռնիկի ազդեցության» շնորհիվ փոփոխում են անփոփոխ կամ հստակ օրինաշափություններով փոխվող թվացող համակարգերը¹.

| Առկա հայացք | Զնավորվող հայացք | |
|------------------------|--|---|
| Ֆիզիկական աշխարհ | Աստվածական, ֆրագմենտացված: Օրյենկությունները անկախ և ինքնուրույն են: Մարդիկ անհատականացված են: | Հոլիստիկ, փոխկապակցված: Օբյեկտները և մարդիկ ինտեգրացված են համագործակցությունում: |
| Ֆիզիկական գործընթացներ | Մատերիալիստական, դետերմինիստական, մեխանիկական: | Օրգանական, փոխսերագող, հոլիստիկ: |
| Օրգանական գործառույթ | Անշատողական. մասսերը փոխադարձաբար փոխանակելի են: | Փոխկապվածություն, փոխկախվածություն, անդառնալիություն: |
| Սոցիալական երնս | Տեխնոլոգիական ուղղվածության, ինտերվենցիոնիստական՝ հիմնված ապրանքների վրա | Կոմունիկացիոն ուղղվածության՝ հիմնված ծառայությունների վրա: |
| Սոցիալական առաջընթաց | Կախված է սպառումից, ռեսուրսների փոխարկում: | Ուղղված է հարմարվողականությանը, ռեսուրսների հավասարակշռությանը: |
| Տնտեսություն | Շարժում է մրցակցությամբ և շահութով, շահագործողական բնույթ ունի: | Շարժում է գործընկերային ուժերով և տեղեկատվությամբ: |

¹ Աղույակը կառուցված է Է. Լապլյի առաջարկած համակարգի հիման վրա (տե՛ս Լասլո Է., Վեկ բնիքրական: постижение изменившегося мира // Путь. 1995. № 1., էջ 89):

| | | |
|-----------------------|---|--|
| Մարդկություն | Գերակայություն բնության հանդեպ, անտրոպոգենտրիզմ | Ինտեգրված է բնությանը, Գայակենտրոնություն |
| Մշակույթ | Եվրոպենտրոն, գա- ղութային | Պլյուրալիստական, բազ- մարկենուային |
| Քաղաքականութ- յուն | Աստիճանակարգ- ված, հիմնված ուժի վրա: | Հետերարխիկ (հոլախիկ), հիմնված ներդաշնակության վրա: |

Սրան կարելի է ավելացնել նաև իրավական իրականությանը.

| | | |
|----------|--|---|
| Իրավունք | Հարաբերականորեն կայուն հարաբերութ- յունները կարգավո- րող, նորմերի՝ ներ- քին որոշակի աստի- ճանակարգային կա- ռուցվածք ունեցող ստատիկ համակարգ | Հարաբերականորեն անկա- յուն հարաբերությունները կարգավորող, նորմերի՝ հո- լիստիկ կառուցվածք ունե- ցող դինամիկ համակարգ |
|----------|--|---|

Իր ամենից խոր մակարդակում, այնուամենայնիվ, համալիր հար-
մարվողական համակարգերի տեսությունը (որ համալիր համակարգերի
կամ սիներգետիկական տեսության դրսւորում է), կիրառված լինելով ի-
րավական համակարգում, իրենից ներկայացնում է հետազոտության
հարուստ և դինամիկ ոլորտ:

Այն խնդիր է առաջադրում.

ա/ արդյո՞ք իրավունքի բիրախները համալիր հարմարվողական
համակարգերն են, և եթե այս, ի՞նչ է դա նշանակում իրավունքի կառուց-
վածքի համար,

բ/ արդյո՞ք իրավունքն այնպես, ինչպես մենք սահմանում ենք, դրա
սահմանները, ինքնին համալիր հարմարվողական համակարգ է, և եթե
այս, ապա ի՞նչ է դա նշանակում իրավունքի կառուցվածքի համար.

գ/ ինչպե՞ս են իրավունքը և նրա կարգավորման թիրախները համա-
կեցում, և ի՞նչ է դա նշանակում իրավունքի կառուցվածքի համար:¹

¹ Ruhl J. B., Law's Complexity, Georgia State University Law Review Symposium Issue, Forthcoming, FSU College of Law, Public Law Research paper No. 313, 885-911 էջ 887:

Ծատ դեպքերում գիտությունը ընդունում է սոցիալական կյանքում գոյություն ունեցող «անտեսանելի ծեռքերի» գոյությունը և համալիր հարմարվողական համակարգերի տեսության օգտագործման արժեքը՝ սոցիալական երևույթների վրա դրանց ազդեցությունը հասկանալու համար: Սակայն շատ դեպքերում որոշ հետազոտողներ ընդդիմանում են այդ տեսության կիրառմանը իրավական համակարգերի նկատմամբ՝ հիմնվելով այն բանի վրա, որ իրավունքը մարդկանց կողմից գրված կանոններ են և հետևաբար դրանք հասարակական կեցությունում չեն կարող առաջացնել անկանխատեսելի, անվերահսկելի հետևանքներ: Սակայն այս մոտեցումը անտեսում է երկու հանգամանք. ա) իրավական համակարգը՝ որպես այլ սոցիալական համակարգերի կարգավորման համար կանոնների արդյուր, պետք է հաշվի առնի, թե ինչպես են այդ համակարգերը գործում: Եթե ինչ-որ մեկը ցանկանում է ղեկավարել համալիր հարմարվողական սոցիալական համակարգ, նա պետք է մտածի համալիր հարմարվողական սոցիալական համակարգի պես, թ) իրավունքը՝ որպես կանոնների և բանաձևերի ամբողջություն, իրավական համակարգի արդյունք է, մարդկանց և ինստիտուտների ամբողջություն: Իրավունքն այս ինաստով պարզապես իրավական համակարգը ձևավորող տարր է, ինչպես զները՝ շուկայում:

Իրավունքը սոցիալական համակարգերում խթանող փոփոխության նախաձեռնություն է, և այստեղ կրկին համալիր հարմարվողական համակարգերի կառուցվածքային հիմնախնդիրները գծագրվում են իրավական համակարգի վրա, ինչպես ներկայացված է ներքոնշյալ մասում¹: Ստորև փորձենք համառոտ կերպով և առանձին փոքր և հասկանալի օրինակներով ներկայացնել համալիր համակարգերի տեսության ձեռքբերումները, և իրավական համակարգը՝ լայն ինաստով, դիտարկելի դարձնել սիներգետիկ աշխարհահայցը տեսանկյունից, ինչը կօգնի իրավական իրականությունում տեսանելի դարձնել երևույթներ, որոնք դժվար տեսանելի են նախկին հարացույցների դեպքում:

Հատկանիշ առաջին՝ տարասեռություն (Heterogeneity): Կանոն՝ համալիր հարմարվողական համակարգը կազմված են բազմաթիվ տարասեռ ինքնավար մասերից (գործակալներից): Իրավական համա-

¹ Ruhl J. B., Law's Complexity, Georgia State University Law Review Symposium Issue, Forthcoming, FSU College of Law, Public Law Research paper No. 313, 885-911էջ, 897էջ:

կարգում դրա օրինակներն են՝ ա) տարբեր իրավական աշխարհահայցը ունեցող օրենսդիրներ, դատավորներ և այլ խաղացողներ, ովքեր իրենց մասնագիտական գործունեությամբ ազդում են իրավաստեղծագործության, իրավակիրառման, իրավապահպանման վրա, բ) իրավաբաններ (այդ թվում՝ փաստաբաններ), պետական մարմիններ և հաճախորդներ, որոնց փոխադրությունը ընթացքում ձևավորվում են սոցիալական պատկերացումը և աշխարհահայցըն իրավական իրականության նկատմամբ, գ) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնց կողմից իրավական նորմերի կիրառման ընթացքում առաջանում են միևնույն հարաբերությունները տարբեր կերպ ընկալելու և գնահատականներ տալու դեպքերը՝ հաշվի առնելով տարբեր գործոններ՝ անհատական, տեղական սովորություններ, ազգային փորձամասնությունների դեպքում՝ մշակույթ և այլն:

Հատկանիշ երկրորդ՝ դետերմինիստական կանոններ: **Կանոն՝** համակարգի ներսում կառուցվածքային մասերը փոխհարաբերվում են միմյանց հետ և հարմարվում են միմյանց՝ համաձայն դետերմինիստական կանոնների: **Իրավական համակարգում, օրինակ՝** ա) ընդիանուր իրավասության, վերաբննիչ, վճռաբեկ դատարանները մեկնարանում են օրենսդրական ակտեր: Սահմանադրական դատարանը որոշում է օրենքների սահմանադրականության հարցը և այլն, բ) հաշվի առնելով դատական պրակտիկան և իրավակիրառ այլ պրակտիկայում ի հայտ եկած օրենսդրական թերությունները՝ օրենսդիրները վերանայում են օրենքները, գ) հստակ սահմանված հաջորդական իրավական պրակտիկան՝ օրինաստեղծագործություն, իրավակիրառում, իրավապահպանում:

Հատկանիշ երրորդ՝ ոչ գծային հարաբերություններ: **Կանոն՝** համակարգի կառուցվածքային մասերի, խաղացողների փոխհարաբերության կանոնները չեն կենսագործվում այն վարքագում և հանգեցնում այն արդյունքի, որը ենթադրվում էր, որ կլինի ժամանակի մեջ շարունակական համաշափ փոխհարաբերության արդյունքում: **Իրավական համակարգի օրինակներ՝** ա) օրենսդիրների քաղաքական դեկավարությունը փոխվում է՝ հանգեցնելով նոր իրավական քաղաքականության, ինչը երենն հակասությունների մեջ է մտնում նախկին իրավական քաղաքականության հետ, բ) նոր իրավական ակտերն ուժի մեջ են մտնում կամ հիմ իրավական ակտերը լրացվում են կամ վերացվում, գ) գերատեսչությունների դեկավարները փոփոխվում են, և փոխվում է քաղաքական ուղղվածությունը, դ) դատարանները անսպասելիորեն վերանայում

Են նախադեպը, կամ սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչում ինչ-որ իրավական նորմ, որը շղթայական փոխագղեցություն է առաջացնում ամբողջ իրավունքի համակարգի ներսում, իսկ հասարակության ներսում արագ զարգացնումների պայմաններում կորչում է այդ շղթայական փոխագղեցության պատճառահետևանքային կապը, և իրավունքի համակարգում (ինչպես նաև իրավական համակարգում) ոչ սովորական, ոչ գծային զարգացումներ են տեղի ունենում:

Հատկանիշ չորրորդ՝ հետադարձ կապի ցանցային կապակցվածություն: **Կանոն՝** համակարգի գործակաների, նաև երի և մակարդակների միջև գոյություն ունի բարձր փոխկապվածություն՝ ստեղծելով հանգույցների և ալիքների ցանց, որի միջոցով տեղեկատվություն է հոսում (իրավական մշակույթ, իրավահասկացություն, իրավական պրակտիկա, էներգիա, փող և այլն): **Իրավական համակարգի օրինակներ՝** ա) գործը վերանայող դատարանների համակարգ, գերատեսչությունների, գործակալությունների աստիճանակարգային կառուցվածքը, բ) օրենսդիրն իր գործողություններով «պատասխանում» է դատարանի կողմից իրավական ակտերի մեկնաբանմանը, գ) սոցիալական կեցությունում կատարվող ցանկացած փոփոխություն, ազդակ, հասարակական հուզում, ընդգում հասարակական համակարգի և պետականության համար իր արտացոլանքն է գտնում իրավական համակարգում, և շատ դեպքերում ուղղակի պատճառահետևանքային կապը դժվար տեսանելի է լինում:

Հատկանիշ ինքնօրորդ՝ ձևավորում և միացում (aggregation): **Կանոն՝** քանի որ համակարգի բովանդակությունը աճում է, համակարգի վարքագիծը մեծամասամբ ձևավորվում է ցանցային շղթայական կապերի միացումներից և փոխսկրծակցությունից, որը չի կարող բացատրվել համակարգի առանձին մասի հետազոտությունից: **Իրավական համակարգի օրինակ՝** պետության կողմից հասարակության տեղեկատվության անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է ունենալ այդ ոլորտում իրավական կարգավորման կառուցվակարգ (օրինակ՝ 2009թ-ի հունիսի 26-ի ՀՀ Նախագահի ՆԿ-97-Ն Կարգադրությամբ հաստատված «ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգ»), իսկ որու համար բավարար չէ միայն տեղեկատվության փոխանցման հեռուստատեսային, ռադիոյի, համացանցի կամ այլ միջոցի առանձին հետազոտությունը: Անցումային և անկայում հասարակական համակարգերում, որտեղ աննշան տեղեկատվական հոսքը կարող է առաջացնել հասարակության համար հսկայական հետևանքներ, անհրաժեշտ է հետազոտել

տեղեկատվական հոսքերի հնարավոր բոլոր ուղիներ, որոնք արդի պայմաններում գնալով շատանում են: Միայն հարաբերական ամբողջական պատկերացում ունենալով է հնարավոր ոլորտը կարգավորել իրավական նորմերի համակարգով, որոնք կկարողանան ո՞չ սահմանափակել զարգացման համար անհրաժեշտ տեղեկատվության հոսքերը, ո՞չ էլ թույլ տան համակարգի համար կործանիչ տեղեկատվության ներմուծումը և օգտագործումը:

Հատկանիշ Վեցերորդ՝ Կախվածությունը ուղղուց (ատտրակտոր): Կանոն՝ համակարգի հաջորդ վիճակը կախված է նախկին բոլոր վիճակների միջով հոսած տեղեկատվությունից: **Իրավական համակարգի օրինակ՝** պետության վերին ատյանի դատարանի (վճռաբեկ դատարանի) հիմնական գործառույթներից է ապահովել դատարանական պրակտիկայի միասնականությունը. այսինքն՝ տալ իրավական նորմի միօրինակ, կանխատեսելի մեկնարանություն, ինչը պարտադիր կլինի հետագայում քննվող գործերի համար:

Հատկանիշ յոթերորդ՝ ինքնակազմակերպվող կառուցվածք: **Կանոն՝** քանի որ համակարգի ծավալը մեծանում է, համակարգը ձգտում է իր շուրջը կազմակերպել խորը կառուցվածքային կանոնների ամբողջություն, որոնք կայունություն կրերեն համակարգի վարքագծին: **Իրավական համակարգի օրինակ՝** անցումային հասարակությունների պետական իշխանությունները, անկայունության փուլից փորձելով դուրս գալ, փորձում են հնարավորինս արագ և շատ իրավական կարգավորում մտցնել հասարակական հարաբերություններում՝ չսահմանափակվելով միայն օրենքների մակարդակով իրավական կարգավորումից և խորացնելով ենթաօրենսդրական իրավական ակտերի կողմից հարաբերությունների կարգավորումը: Այլ խոսքերով՝ հասարակական շարժնրացում իրավական նորմերով փորձ է արվում ավելացնել սինկրետիզմը (պահպանողական վեկտոր):

Հատկանիշ ութերորդ՝ ծայրահեղ վիճակներ: **Կանոն՝** չնայած համակարգի խորը կայուն կառուցվածքային գծերը, դինամիկ որակները (ոչ գծային հարաբերություններ, ցանցային արձագանք) փոքր են՝ համակարգի «մակերերսի» վրայի փոփոխության համեմատությամբ, համակարգը զարգանում է «կայուն անհավասարակշիռ» վարքագծի ներքո, երբեմն մոտ քառսին կամ քառսի «սահմանին»: **Իրավական համակարգի օրինակ՝** ա) իրավունքը նույնպես շարունակարար փոփոխվում է, քանի որ նոր իմացություն և նոր հանգամանքներ են մուտք գործում համա-

կարգ հատկապես անցումային ժամանակահատվածում, երբ արժեքահրավական կողմնորոշման մեջ փոփոխություններ են կատարվում (օրինակ՝ եւրոինտենզիրացի և այլն), բ) թեև ՀՀ անկախությունից հետո ընդունվել են կայուն հարաբերությունները կարգավորող հիմնական օրենսգրքեր (հատկապես քաղաքացիական և վարչական իրավախսական համարությունների վերաբերյալ օրենսգրքերը), այնուամենայնիվ դրանք չափազանց հաճախ են ենթարկվում փոփոխությունների և լրացումների:

Հատկանիշ իմեներորդ՝ իրավունքի հետ կապված իրադարձությունների բաշխման իշխանություն: **Կանոն՝** համակարգում իրադարձությունների «չափերի» բաշխումը չի ցուցադրում երկանդամ սովորական բաշխում, այլ ասիմպոտիկ հատկությունները՝ շատ «փոքրիկ» և շատ քիչ «լայն» իրադարձություններով: **Իրավական համակարգի օրինակ՝** ա) անգլուամերիկյան երկրներում գերագույն դատարանները, ՀՀ-ում Վճռաբեկ դատարանը, ՄԻԵԴ-ը շատ հազվադեպ են փոխում ձևավորված նախադեսը, բ) նախադեպային նշանակություն ունեցող որոշումների շատ փոքր մասն է ամենաշատը հիշատակվում և օգտագործվում այլ գործերում. այսինքն՝ փաստացի դառնում նախադեպային:

Հատկանիշ տասներորդ՝ հարմարվողական դիմադրություն և ճկունության կարողություն: **Կանոն՝** այդ ներքին վարքագծերի արդյունքում համակարգը՝ որպես ամբողջություն, դիմադրություն է ցույց տալիս միջավայրային գրգռումներին և դրսնորում է մկունություն միջավայրային գրգռմանը հաջորդող իր՝ կրկնվող կամ ինքնակազմակերպմանը մոտ ծայրահեղ վիճակներին: **Իրավական համակարգի օրինակներ՝** ա) հաճախ է պատահում, որ իրավունքի համակարգում երկար ժամանակ իրավական քաղաքականությունը բույլ չի տալիս որոշակի իրավական նորմերի մուտքը, որոնք, թեև, անհրաժեշտ են լինում թե՛ իրավունքի դինամիկայի, թե՛ հասարակության կատարելագործման ու առաջընթացի համար, բ) շատ դեպքերում իրավական քաղաքականությունը ստիպված է լինում առաջ գնալ արտաքին և ներքին ազդեցություններին և ընդունել որոշ իրավական նորմեր՝ որպես իր իրավունքի համակարգի մաս, սակայն դա անելուց դրսնորվում է իրավական քաղաքականության հմտությունը և դիվանագիտությունը. օրինակ՝ միջազգային որևէ իրավական փաստարությ վավերացնելիս կատարվում են վերապահումներ, որոնցով իրավական ակտը համապատասխանեցվում է ազգային իրավունքի համակարգին:

Հատկանիշ տասնմեկերորդ՝ փուլային անցում: **Կանոն՝** եթե համալիր հարմարվողական համակարգը չափազանց հեռու իրվի իր ինքնակազմակերպվող ծայրահեղ վիճակից կա'մ հզոր գրգռման, կա'մ ավելի քոյլ գրգռումից կայուն ճնշման պատճառով, համակարգը կարող է մտնել ոչ գծային և պոտենցիալ անշրջելի շարժման մեջ, դեպի հնարավոր վարքագծերի նոր ամբողջություն: **Իրավական համակարգի օրինակ՝** 1980-ական թթ. վերջին և 1990-ական թթ. սկզբներին ամբողջ աշխարհակարգը և միջազգային իրավակարգը ցնցվեց ներքին և արտաքին ազդակների և համակարգային զարգացումների պատճառով փլուզվող խորհրդային կարգերից, ինչի հետևանքով ոչ միայն սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումների ամբողջությունը մտան անշրջելի զարգացումների նոր փուլ, այլև այդ ամենը արտահայտող իրավական համակարգը աշխարհի գրեթե բոլոր երկրներում կրեց անշրջելի փոփոխություններ և մտավ զարգացման նոր ատտրակտորի ուղեգիծ: Նախկին համակարգի (աշխարհակարգի) քառային համակարգ մտնելու պահը և դրանից դուրս գալու գործընթացը եղան այն արարող փուլը, որը պիտի կանխտրոշելին հետագա զարգացման և կարգի ստեղծման ամբողջ գործընթացը՝ ձևավորելով ազատության, իրավունքի և պարտավորության նկատմամբ նոր տեսանկյուն:

Այժմ, հաշվի առնելով վերոնշյալը, փորձենք ներկայացնել իրավունքը՝ որպես համալիր համակարգ, ինչը կօգնի ընդարձակել իրավական երևույթների ավելի տեսանելի և հասկանալի դարձնելու մեր հնարավորությունները: Կատարված մտահանգումներն ավելի հասկանալի դարձնելու համար սկզբից ներակայացվում է **կառուցվածքային հիմնահարցը**, ապա՝ **ազդեցությունն համալիր (հարմարվողական) համակարգի կառուցվածքի վրա**, այնուհետև՝ իրավական համակարգի օրինակը:

1. **Զգայունությունը նախնական պայմաններից:** Հետաղաք կայի, ոչգծայնության և ձևավորման պատճառով հարաբերականորեն փոքր փոփոխությունները սկզբնական պայմաններում կարող է առաջացնել հարաբերականորեն մեծ փոփոխություններ համակարգի դինամիկայում: Օրինակ՝ անցումային և անկայուն փուլ մտած հասարակական համակարգի համար գրեթե բոլոր իրավական նշանակության որոշումները և ակտերը մեծ հնարավորություն ունեն ամբողջ իրավունքի համակարգի և նույնիսկ պետականության զարգացման վրա ահուելի ազդեցություն կատարելու:

2. Համապատասխանող վայրում (landscape) պայքարող խոչընդունելիք: Մի համակարգի բաղադրամասում համապատասխանեցնելուն ուղղված փոփոխությունները կարող են սահմանափակված լինեն մյուս համակարգի բաղադրամասերի հատկություններով, որոնք նույնական կառուցվել են համապատասխանությանը նպաստելու համար: Օրինակ՝ շրջակա միջավայրի կարգավորման խստացումն ունենում է տնտեսական ազդեցություններ՝ հաճախ ենթու տնտեսական զարգացման որոշ ոլորտների սահմանափակումներին կամ ընդհանրապես՝ արգելմանը: Իսկ շուկայի վրա հիմնված իրավական լուծումները վտանգի տակ են դնում շրջակա միջավայրը:

3. Համաէվոլյուցիային համապատասխանող միջավայր և «Կարմիր բազուիկ» ազդեցությունը: A համակարգի համապատասխանեցման բարեփոխումները հրահրում են հարմարվողական համաէվոլյուցիոն շարժումներ այլ համակարգերում, որոնք կարող են բացառել A համակարգում առավել հարմարվողականությանը նպաստող նոր կերպարանքին ձգողությունը: Օրինակ՝ ՀՀ իրավունքի համակարգը ԵՄ իրավունքի համակարգին մոտարկելու գործընթացում հնարավոր են դեպքեր, օրինակ, երբ ՀՀ-ում ձևավորված ֆինանսակավարկային համակարգը, օգտվելով ֆինանսավարկային գործընթացների ԵՄ բարձր ստանդարտներից, սահմանափակի ոլորտում փոքր խաղացողների մուտքը և դրանով իսկ ամրապնդի սահմանափակ թվով որոշ խաղացողների գերիշխող դերը շուկայում: Արդյունքում որոշ ժամանակ անց ոլորտի ձևավորված մենաշնորհային իրականությունը շատ ավելի մեծ խոչընդունելի կառաջացնի ԵՄ - ՀՀ ինտերնացիոն այդ բվում իրավունքի համակարգերի մոտեցման գործընթացներում:

4. Համակարգի ամբողջական վարքագծի անհաշվարկելիություն, անճանաչելիություն: Քանի որ ձևավորումը համակարգային իրավասության, բովանդակության երևույթ է, համակարգի վարքագիծը չի կարող հասկացվել առանձին մասի կամ մասերի խմբի ուսումնասիրությամբ: Օրինակ՝ չի կարելի պատկերացնել իրավախասումների ընդհանուր պատկերը՝ հետազոտելով մեկ գործ կամ նույնիսկ մեկ հանցագործությանը առնչվող բոլոր գործերը: Հասարակության արագընթաց զարգացող գործընթացները ճիշտ իրավական կարագվորման ենթարկելու համար անհրաժեշտ է առավել շատ հասկանալ ինչպես առանձին գործընթացի, այնպես էլ ընդհանուր գործընթացների համակարգի կոնկրետ

տեղը սոցիալական հսկայական փոխկապվածությունների մեջ և զարգացման շարժընթացը: Սակայն որքան լուրջ է հետազոտվում և տեղայնացվում իրավական նշանակություն ունեցող կոնկրետ գործընթացը, այնքան շատ է հեռանում դրա շարժընթացը ճշմարտացիորեն պատկերացնելու հավանականությունը:

5. Համակարգի վիճակների անդառնալիություն: Քանի որ ներկա համակարգի վիճակը արդյունք է ամրող տեղեկատվության, որ հոսել է համակարգի միջոցով բոլոր նախկին վիճակներում մինչև ներկայի այդ կետը, համակարգի դիմամիկան չի կարող վերադարձվել դեպի անցյալ վիճակներ, այլ միայն դեկավարվել դեպի նոր ուղղություններով՝ ենթադրելով, թե որ կտաներ, եթե այլ որոշումներ չընդունվեին: Օրինակ՝ սրա պարզ օրինակն այն է, որ հարաբերությունը կարգավորող օրենքի վերացումը կամ նախադեպի վերանայումը չի կարող աշխարհը հետ տանել դեպի այն կետը, եթե այդ ակտը կամ նախկին կարգավորումը կիրառվել է: Այլ խոսքերով, այս կանոնը նշանակում է, որ անցյալի իրավական կոնկրետ կարգավորման փորձի (իր հնարավոր բոլոր տարրերակներով, այդ թվում՝ չկիրառված իրավունքով կամ կիրառելի այլ իրավունքով) գիտակցումն է միայն հնարավոր դարձնում ներկայում կամ ապագայում իրավական կարգավորման ամենից արդյունավետ տարբերակը ընտրել՝ խուսափելով նախկին սխալները կրկնելուց:

6. Ոչ մշտապես օպտիմիլացնող համապատասխանեցում: «Համաէվոլյուցիոն համապատասխանող միջավայրային ազդեցության պատճառով գերակայող համապատասխանությունը չի կարող միշտ «փակվել ներսում» և փորձել վարվել այդպես, նմանապես չի կարող ապացուցել հակառարդյունավելտությունը: Օրինակ՝ որքան էլ հնարավոր լինի կատարելագործել ոլորտի օրենսդրական կարգավորումը (օրինակ՝ շրջակա միջավայրի պաշտպանության, արտակարգ դրություններ և այլն) ոլորտի արագ զարգացումները շատ դեպքերում հնարավորություն չեն տախի առաջնորդվելու առկա իրավական նորմերով՝ արդյունավետ կարգավորում ստանալու համար (բնական աղետներ և այլն): Ոլորտի օրենսդրական կարգավորման խստացումը շատ դեպքերում կարող է ունենալ հակառակ ազդեցությունը և օրենսդրական շատ նորմեր իրականում լինեն չգործող և ավելին՝ պարբերաբար խստացումը վերը նշված պատճառներով:»

7. Անկանխատեսելի ապագայի վիճակներ: «Աշվի առնելով բոլոր համալիր հարմարվողական համակարգային հատկությունները՝ համա-

կարգի ապագա վիճակները և «մեծ» իրադարձությունները կանխատեսիլի չեն հարաբերական ժամանակային հորիզոնում։ Օրինակ՝ իրավաստեղծագործության յուրաքանչյուր դեպքում հնարավոր զարգացումները կանխատեսելու ունակություն է պահանջվում, սակայն որքան էլ մարդկային հոլիստիկ միտքը կարողանա պատկերացնել երևույթի զարգացման, վարքագծի կատարման հնարավոր տարերակները, համալիր համակարգերը, որոնք հասարակական կյանքի գործեր բոլոր ոլորտներում առկա են, իսկ անկայունության փուլում էլ ավելի են համալիր դառնում ժամանակի սեղմնան պատճառով, շատ դեպքերում մարդկային մտածողությունից շատ ավելի արագ են զարգանում և ինքնակազմակերպվում։ Արդյունքում կարգավորված հարաբերությունները հնարավոր հասարակական հարաբերությունների չնշյան մասն են կազմում՝ ճանապարհ բացելով հասարակական զարգացման որոշ փուլերում ամենաարդության և մարդկային հարաբերությունների և արժեհամակարգի դեգրադացիային։

Այսպիսով, ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ «սիներգետիկական մեթոդների օգտագործումը համարվում է անհրաժեշտ տարր կիրառական իրավունքի ոլորտում։ Ըստ Էության, և՝ իրավաստեղծագործական և իրավակիրառական գործունեությունը պահանջում են իրավունքը դիտարկել նվազագույնը որպես բարդ համակարգ ուղղակի և հետադարձ կապերով»¹։ Իրավունքի կենսագործման ընթացքում առաջացող խնդիրները, նույնաբնույթ հասարակական հարաբերություններ կարգավորող նորմների բախումները (Կոլիզիանները) և, ընդհանրապես, արդի իրավունքում առկա համալիր խնդիրները հիմնականում առաջանում են այն պատճառով, որ օրինաստեղծագործության սկզբնական փուլում հաշվի չեն առնվում մի շարք կարելոր գործուներ։ Դրանց թվին կարելի է դասել հետևյալներ՝ ինչպես պետք է համապատասխան նորմերը ներմուծվեն իրավունքի համակարգ, արդյոք դրանց ներմուծումը չի՝ հանգեցնի այլ նորմների գործողության խնդարյուրման, արդյոք նոր ստեղծվող նորմերը չե՞ն հակասում մինչ դրանց գոյությունն առկա իրավական համակարգի սկզբունքներին, արդյոք ժամանակահատվածը, որ ընտրված է իրավական համակարգ նորմի ներմուծման համար, հարմա՞ր է այդ գործողության համար, թե՝ կարող է հասարակական կյանքի զարգացումների ա-

¹ М.Г. Тирских. Право как объект применения синергетических методов, Академический юридический журнал, № 2 (28) (апрель — июнь) 2007, էջ 4-9, էջ 7.

րագացման պայմաններում տեղի ունենա ժամանակի սեղմնան երևոյթ, և յուրաքանչյուր նոր նորմի ստեղծումը մեծացնի պետարավական ճգնաժամի հավանականությունը, արդյոք իրավական այդ նորաստեղծ նորմը փոխապահության մեջ՝ է գտնվում սոցիալական այլ նորմերի հետ, որոնք կարող են էական փոփոխության ենթարկվել ուղղակի կամ անուղղակի հետադարձ կապով, ինչն էլ մեծացնում է սոցիալ-պետական ճգնաժամերի հավանականությունը կամ նվազագույնը սնուցում դրանց, ինչպիսի՞ դեր ունի նորաստեղծ նորմը առկա ֆինանսատնտեսական համակարգի համար, քանի որ վերջինս է համարվում արդի պետությունների ամենաաղինամիկ և զգայուն ոլորտը, և որում փոքր փոփոխությունները հնարավորություն ունեն անսպասելի զարգացումներ առաջացնելու ամբողջ հասարակական համակեցությունում և այլն:

Արդի իրավունքի համալիրության գիտակցումը թույլ է տալիս կարևորել սիներգետիկ մոտեցման անհրաժեշտությունը իրավաբանական հետազոտություններ կատարելիս, ինչպես նաև պետության իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահ գործառությունները կյանքի կոչելիս: Այստեղ կարելի է առաջնահերթ համարել իրավաստեղծ ոլորտը, որտեղ գործող իրավաբանների համար առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում սիներգետիկ, համալիր մտածողությունը, քանի որ «իրավական նորմի ընդումը, առանց հաշվի առնելու ձևավորված հասարակական հարաբերությունները, կարող է հանգեցնել նվազագույնը այն քանի, որ նորմը չգործի, իսկ վատագույն դեպքում՝ սոցիալական լարվածության ուժեղացմանը և ճգնաժամային երևույթների աճին»¹:

Եվ, ընդհանրապես, սիներգետիկական մեթոդաբանությունն իրավունքի համակարգային ճանաչողության չափազանց կարևոր մասն է: Իրավունքի տեսության ավանդական մեթոդների հետ միասին, այս հնարավորություն է տալիս գիտակցելու իրավունքի համալիրությունը, առավել պարզ և տեսանելի դարձնելու և հետևաբար՝ զնահատելու տեղի ունեցող իրավական իրադարձությունները, դրւու բերելու դրանց օրինաչափությունները և առանձնահատկությունները, ինչպես նաև հնարավորություն է տալիս կատարելու ինչպես ամբողջությամբ իրավունքի համակարգի, այնպես էլ դրա առանձին տարրերի ֆուտուրոլոգիական վերլու-

¹ Демидова Н.Г. О возможности использования синергетики в правоведении, Вестник, Саратовский государственной академии права, ISSN 1561_9494, 2009, էջ 21-24, էջ 24:

ծություն՝ դրանով իսկ իրացնելով իրավունքի տեսության ֆուտուրոլոգիական գործառույթը։ Հակառակ պարագայում, այսինքն՝ իրավունքի համալիրությունը զփառակցելը կամ այդ համալիրությունը դասական գիտության մերողաբանությամբ ուսումնասիրելը դատապարտված է անհաջողության, իսկ նման ուսումնասիրության արդյունքում ստեղծված իրավունքը ավելի շատ բացասական, քան իրական դեր կարող է խաղալ համալիր սոցիալ-պետական հարաբերությունները հարզավորելու գործում։

Taron Simonyan

PhD student at the Chair of Theory and History of State and Law, YSU

THE COMPLEXITY OF CONTEMPORARY LAW. SYNERGETIC APPROACH

One of the main features of the contemporary law and legal system, in general, is their complex nature. In a transitional phase of evolution of societies and statehoods, when the whole system is unstable one, sometimes, behaving at the edge of chaos, the social behavior, statecraft and the norms regulating them are also under huge influence of instability.

The one who tries to research the contemporary law and legal system, to create law, apply norms of law in such a phase of evolution, will fall in the end, if s/he does not use the synergetic (complex systemic) approach/paradigm, as only this approach suggests the methodology dealing with complex, sometimes, chaotic systems.

The paper, bearing in mind all this, tries to define the important features of legal/law systems, which can only been seen and brought to light with the synergetic approach. And realizing the whole aspects of complex behavior of such systems, the paper suggests implementation mechanisms of the new methodology in the process of law-creation and law-application, in order to refrain from acting useless in those legal processes.